ՏՐԱՆՍ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրիլ - Մայիս 2021

ԻՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հ-19

ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ՝ SWAN-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ----------2
ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԱԿՏԻՎԻԶՄ» ԹԵՄԱՅՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔԸ----------3
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄԸ
ՃԱՆԱՉՎԵՑ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ----------6
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ----------8
ԻԿ ԻՀԿ-Ն ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ Է ՄՈՆԻԿԱ ՍԱՐԿԻՍՅԱՆԻՆ
ՄԻՍՍ ՏՐԱՆՍ ԳԼՈԲԱԼ 2021Թ.-Ի ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ-------9
ՄԱՅԻՍԻ 17-Ն ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՆՇՎՈՒՄ Է ՈՐՊԵՍ ՀՈՄՈՖՈԲԻԱՅԻ,
ՏՐԱՆՍՖՈԲԻԱՅԻ ԵՎ ԲԻՖՈԲԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ(IDAHBIT)----------10
«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ. ԿԱՊ ՎԱՂՎԱ ՀԵՏ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ
ՆԱԽԱՁԵՌՆԵԼ ԵՆ ՄԻ ՇԱՐՔ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ----------11
ԻՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ----------15



Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ հիմնադիր նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը ընտրվել է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում Սեքս-աշխատողների իրավունքների պաշտպանության կազմակերպությունների ցանցի (SWAN) կառավարման խորհրդի անդամ:

#ՍԵՔՍ_ԱՇԽԱՏԱՆՔԸ_ԱՇԽԱՏԱՆՔ_Է

#ԻՄ_ՄԱՐՄԻՆԸ_ԻՄ_ԻՐԱՎՈՒՆՔՆ_Է

#ԵՍ_ԵՄ_ՏԵՐԸ_ԻՄ_ՄԱՐՄՆԻ

ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ՝ SWAN-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

Հարգելի՛ գործընկերներ, ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ և ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂ համայնք,

Ուրախ ենք ձեզ հետ կիսվել այս հրաշալի նորությամբ:

Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ հիմնադիր նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը ընտրվել է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում Սեքս-աշխատողների իրավունքների պաշտպանության կազմակերպությունների ցանցի (SWAN) կառավարման խորհրդի անդամ:

Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ն, լինելով տրանս անձանց և սեքս աշխատողների շահերի պաշտպանությամբ զբաղվող առաջատար կազմակերպությունը ՀՀ-ում և տարածաշրջանում, կարևորում է սեքս աշխատողների ներգրավածությունը կյանքի բոլոր ոլորտներում ՝ կանխելով սեքս աշխատողների նկատմամբ խարանը և խտրականությունը, ապահովելով նրանց համար անվտանգ և բարեկեցիկ միջավայր:

Լիլիթ Մարտիրոսյանը բազմիցս է տեղական և միջազգային մակարդակներում բարձրաձայնել սեքս աշխատողների նկատմամբ շարունակվող անմարդկային վերաբերմունքի, խարանի և խտրականության դեպքերը. այս հարթակը ևս մեկ հնարավորություն է պայքարելու սեքս աշխատողների իրավունքների լիարժեք կիրարկման համար:

Հայաստանում դեռևս լուծված չեն բազում խնդիրներ սեքս աշխատող անձանց համար, մասնավորապես ՝

- Սեքս աշխատանքն անօրինական է:
- Սեքս աշխատողները տուգանվում են:
- Սեքս աշխատողները ենթարկվում են բռնության:
- Սեքս աշխատողները ենթարկվում են խարանի և խտրականության:
- Սեքս աշխատողները ենթարկվում են հալածանքի և ծաղրանքի:
- Ոստիկանության կողմից բազմից հրապարակվում են նկարներ և հոլովակներ, որը վտանգում է նրանց անվտանգությունը:
- Սեքս աշխատողները հասարակության կողմից անտեսված և արհամարհված են:

Լիլիթ Մարտիրոսյանը, լինելով SWAN-ի կառավարման խորհրդի անդամ, անելու է անհնարինը օգնելու SWAN-ի ողջ թիմին կառուցել անվտանգ և բարեկեցիկ կյանք սեքս աշխատող անձանց համար ոչ միայն Հայաստանում, այլ նաև ամբողջ աշխարհում:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԿՏԻՎԻԶՄ» ԹԵՄԱՅՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔԸ

B | S | T The Black Sea Trust for Regional Cooperation
A PROJECT OF THE GERMAN MARSHALL FUND

RIGHT SIDE

HPLGBT

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն սույն թվականի փետրվար-մարտ ամիսներին իրականացրեց թվով տասը համայնքային հանդիպում Տրանսգենդեր ԼԳԲԻՔ ակտիվիստների, նրանց ընտանիքի անդամների և համակիրների հետ կազմակերպության համայնքային կենտրոնում:

Առաջին հանդիպումը տեղի ունեցավ փետրվարի երկուսին, տասը ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ ակտիվիստների հետ՝ «Տրանս անձանց իրավիճակը ՀՀ-ում» թեմայով: Դասընթացի ընթացքում մասնակիցները կիսվեցին իրենց հուզող հարցերով, ինչպիսիք են՝ անվտանգության ձևավորումը ՀՀ-ում, խարանը և խտրականությունը Տրանս անձանց նկատմամբ, օնլայն տիրույթում շարունակվող ատելության կոչերը, ՔՈՎԻԴ -19-ի ընթացքում հանդիպած դժվարությունները և մի շարք այլ հարցեր, որոնց բախվում են Տրանս անձինք ՀՀ-ում: Տրանսգենդեր համայնքի ներկայացուցիչները կատարեցին կարիքների քարտեզագրում, ապա քննարկեցին՝ ապագայում ինչ անել, որպեսզի ՀՀ-ում բարելավվի Տրանս անձանց իրավիճակը: Դասընթացավար Լ. Մարտիրոսյանը, փաստագրելով բոլոր մասնակիցների խնդիրները և կարիքները, վստահեցրեց, որ մոտ ապագայում բոլոր խնդիրները միասնական ջանքերով լուծվելու են՝ հասնելով ՀՀ-ում մարդու իրավունքների հարգմանը և անվտանգ միջավայրի ձևավորմանը: Մասնակիցները, կարևորելով նմանատիպ կրթական համայնքային հանդիպումները, առաջարկեցին մի շարք թեմաներ հաջորդ հանդիպումների համար:

Շարունակելով դասընթացների շարքը՝ երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ փետրվարի տասնիններին «Իրավունքի կողմ» ՀԿ-ի ապահով տարածքում՝ համախմբելով Երևանից և տարբեր մարզերից քսան Տրանս ԼԳԲԻՔ ակտիվիստներին և նրանց ծնողներին. դասընթացի նպատակն էր ստեղծել մեկ միջավայր, որտեղ Տրանս անձինք կարող էին իրենց ծնողների հետ քննարկել ընտանեկան այնպիսի խնդիրներ, որոնք լուծումներ չէին ստացել այս տարիների ընթացքում: Դասընթացի ընթացքում քննարկվեց խարանը և խտրականությունը ընտանիքի անդամների կողմից, մասնավորապես հայր ծնողների կողմից: Դասընթացի ավարտը շատ էմոցիոնալ էր, քանի որ կային անձինք, որոնք առաջին անգամ բարձրաձայնեցին այնպիսի խնդիրներ, որոնք խանգարում էր համաերաշխության մթնոլորտի ձևավորմանը ընտանիքում, ծնողների և երեխաների գրկախառնությամբ ավարտվեց շատ կարևոր ևս մեկ հանդիպում:

Հաջորդ դասընթացը տեղի ունեցավ փետրվարի քսաներկուսին, այս անգամ դասընթացի թեման ընտրվել էր «Մեր իրավունքները ոստիկանական բաժանմունքներում և դատարաններում»: Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ տարբեր մարզերից և Երևանից տասը ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ ակտիվիստներ, որոնք մասնակցել էին նախորդ հանդիպումներին: Դասընթացը վարում էր Կազմակերպության փաստաբան Ա. Մարգարյանը, ով մասնակիցներին տվեց լիարժեք տեղեկատվություն, թե ինչպես պաշտպանել իրավունքները ոստիկանական բաժանմունքներում, ինչպես պահանջել փաստաբան, որ ժամանակ և որ դեպքերում ներկայանալ ոստիկանություն, պատասխանեց մի շարք հարցերի, որոնք հետաքրքիր էին մասնակիցներին, այնուհետև մասնակիցները ստացան գիտելիքներ ՀՀ դատական իշխանության վերաբերյալ, պատկերացում կազմեցին դատական ատյանների մասին: Ա. Մարգարյանը խոսեց նաև Եվրոպական դատարանի դերի, Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի մասին և ներկայացրեց իրավունքներին առնչվող մի շարք այլ մանրամասներ, որոնք անհրաժեշտ են բոլոր մասնակիցներին հետագայում իրենց ակտիվիստական գործունեությունում օգտագործելու համար: Դասընթացն ավարտելով Ա. Մարգարյանը հավելեց, որ կարող են ցանկացած իրավական հարցերով դիմել իրեն, ստանալ խորհրդատվություն և ներկայացուցչություն, ապա հավելեց, որ բոլորը պետք է տեր կանգնեն իրենց իրավունքներին և ապրեն արժանապատիվ կյանքով՝ զերծ խարանից ու խտրականությունից, ծաղրանքներից ու բռնություններից:

Տրանս ԼԳԲԻՔ ակտիվիստների հետ չորրորդ հանդիպումը տեղի ունեցավ մարտի մեկին, որի թեման էր «Խարան, խտրականություն, ատելության խոսքը մեդիայում և դրա ազդեցությունը համայնքի վրա»: Դասընթացի նպատակն էր նվազեցնել խարանը և խտրականությունը ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ անձանց կյանքում, փաստագրել նրանց նկատմամբ ատելության խոսքի դեպքերը սոցիալական մեդիայում և դրանք կանխելու համար լուծումներ գտնել: Բոլոր ակտիվիստները մտահոգություն հայտնեցին երկրում հետպատերազմյան իրավիճակի վերաբերյալ, որն ավելի է սրել խտրականության մակարդակը ինչպես իրական կյանքում, այնպես էլ առցանց հարթակում: Դասընթացի ընթացքում ակտիվիստները բարձրաձայնեցին մի շարք խնդիրներ ատելության խոսքի և օրենքների բացակայության հետ կապված, որոնք ազդում են անհատի անվտանգության և բարեկեցիկ կյանքի որակի վրա, ինչպես նաև առաջ քաշեցին ոստիկանության կողմից պարբերաբար կարճվող այն գործերը, երբ ոստիկանությունն ատելության խոսքը չի դիտարկում որպես հանցագործություն:

Հաջորդ հանդիպումը կազմակերպվեց մարտի չորսին՝ քսան Տրանս ԼԳԲԻՔ և սեքս աշխատող անձանց մասնակցությամբ. սեմինարի թեման էր «ՔՈՎԻԴ-19-ի ազդեցությունը տրանսգենդեր և սեքս աշխատող համայնքների ակտիվիստական գործունեության վրա»: Սեմինարը վարում էր կազմակերպության Տրանս ԼԳԲԻՔ անձանց համայնքի պատասխանատու Հ. Գալստյանը: Մասնակիցները կիսվեցին համավարակի ծանր օրերին հանդիպած իրենց դժվարությունների մասին, թե ինչպես են կարողացել ապրել և պայքարել իրենց իրավունքների համար այդ ծանր օրերին՝ չունենալով աշխատանք, գումար և ոչ մի օգնություն ընտանիքի անդամների կողմից: Բոլոր մասնակիցները կատարեցին կարիքների գնահատում, քննարկեցին դրանց լուծման ուղիները, բարձրացրեցին իրենց հուզող հարցերը և ստացան սպառիչ պատասխաններ: Համայնքների ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին ԻԿ ԻՀԿ թիմին և ֆինանսավորող կազմակերպությանը համավարակի օրերին տրամադրված սոցիալական աջակցության համար, որը շատ հրատապ և կարևոր էր:

Ակտիվիստների նախաձեռնությամբ հաջորդ հանդիպումը կազմակերպվեց մարտի ինին «Իրավունքի կողմ» ՀԿ ապահով տարածքում. հանդիպմանը մասնակցում էին տասնհինգ Տրանս ԼԳԲԻՔ ակտիվիստներ և համակիրներ: Այս անգամ ակտիվիստներն ընտրել էին՝ ինչպես պատրաստել տեղեկատվական պաստառներ, ամսագրեր, թռուցիկներ, որոնք կբարձրացնեն ԼԳԲՏԻՔ անձանց տեսանելիությունը հասարակության մեջ և մեդիայում: Սեմինարը վարում էր կազմակերպության գրաֆիկ դիզայներ Ռ. Եղիազարյանը, ով կիսվեց իր անցած փորձով, մասնակիցներին տվեց մանրամասն գիտելիքներ գրաֆիկական ծրագրերի վերաբերյալ, որոնք հետագայում ակտիվիստներին կօգնեն սոցիալական մեդիայում հանրային իրազեկման արշավներ իրականացնելու գործընթացում: Ակտիվիստները շնորհակալություն հայտնեցին դասընթացավարին նոր գիտելիքներ և հմտություններ տրամադրելու համար, ապա ավելացրին, որ ստացած գիտելիքները կօգտագործեն ԼԳԲՏԻՔ անձանց վերաբերյալ սոցիալական մեդիայում կարծրատիպեր կոտրելու համար: Ռ. Եղիազարյանը բոլորին խնդրեց հաջորդ հանդիպմանը ներկայացնել մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ պաստառ և տարածել սոցիալական մեդիայում:

Շարունակելով հանդիպումների շարքը՝ մարտի տասներեքին տեղի ունեցած դասընթացի ընթացքում ակտիվիստները Ռ. Եղիազարյանին ներկայացրին անցած դասընթացին խոստացված մեդիա պաստառները, որոնք ուղղված էին մարդու իրավունքներին, Ռ. Եղիազարյանը շնորհակալություն հայտնեց բոլոր ակտիվիստներին քրտնաջան աշխատանքի համար, ապա խնդրեց հետագայում ներգրավվել ՀԿ աշխատանքներում, բարձրացնել կազմակերպության մասին իրազեկվածությունը տեղական և միջազգային մակարդակներում: Այս հանդիպման թեման էր «Ես՝ որպես ԼԳԲՏԻՔ ակտիվիստ»: Քանի որ թեման հոգեհարազատ էր բոլոր ակտիվիստներին, նրանք առաջարկեցին մշակել անվտանգության ուղեցույց, որը կօգնի հետագայում ավելի պաշտպանված լինել, քանի որ ակտիվիստները շարունակաբար ենթարկվում են խարանի և խտրականության, և բախվում են մի շարք անվտանգային խնդիրների՝ որպես առաջնագծում պայքարողներ: Մասնակիցները մշակեցին անվտանգության ուղեցույց ոչ միայն իրենց, այլ նաև համայնքի մնացած ներկայացուցիչների համար՝ ապահովելու և պաշտպանելու նրանց ֆիզիկական և հոգեկան անվտանգությունը: Մասնակիցներն առաջարկեցին կազմակերպել սեմինարների շարք իրենց հասակակիցների համար՝ կիսվելու իրենց ձեռք բերած գիտելիքներով: ԼԳԲՏԻՔ ակտիվիստները կազմեցին նաև ԼԳԲՏԻՔ անձանց համար հանրային միջոցառումների օրացույց, որպեսզի հետագայում կազմակերպեն իրազեկվածության բարձրացման միջոցառումներ և ակցիաներ: Հանդիպման ավարտին մասնակիցները շնորհակալություն հայտնեցին մեկը մյուսին արդյունավետ խմբային աշխատանքների համար և որոշեցին հաջորդ հանդիպման օրը:

Մարտի քսանչորսին տեղի ունեցած «Ինչպե՞ս հանրային դեմքերին ներգրավել ԼԳԲՏԻՔ ակտիվիզմի մեջ» թեմայով հանդիպման ընթացքում մասնակիցները դասընթացավարի օգնությամբ առանձնացրին ԼԳԲՏԻՔ անձանց հիմնախնդիրները և մշակեցին դրանց լուծմանն ուղղված գործողություններ, որոնց կարևոր մասն էր կազմում հանրային դեմքերի ներգրավումը այդ գործընթացներում: Դասընթացի մասնակիցները ձեռք բերեցին հմտություններ, որոնց շնորհիվ կկարողանան խթանել թիրախ խմբերի մասնակցությունը առաջնորդության և հավասարության հաստատման ծրագրերում:

Հաջորդ նախավերջին հանդիպումը նվիրված էր ինքնախնամքին, որին մասնակցում էին տասներկու Տրանս ԼԳԲԻՔ ակտիվիստներ, որոնք ներգրավվել էին դասընթացին Երևանից և ՀՀ տարբեր մարզերից: Դասընթացը վարում էր կազմակերպության հիմնադիր նախագահ Լ. Մարտիրոսյանը, ով ակտիվիստներին խնդրեց ակտիվիզմի ամբողջ ընթացքում ուշադրություն դարձնել ինքնախնամքին, քանի որ ակտիվիստները հաճախակի են ենթարկվում սթրեսի, տրավմայի և հոգեկան ու ֆիզիկական գերհոգնածության և հետագայում բազում խնդիրներ են ունենում, կարևորեց ընդգծեց հանգստի կարևորությունը, որպեսզի հետագայում չունենան այրման զգացում: Մասնակիցները բարձրաձայնեցին այն բոլոր խնդիրները, որոնք կապված էին ինքնախնամքի հետ և առաջարկեցին, որ յոգայի, մեդիտացիայի հանդիպումներ հաճախակի կազմակերպվեն, հոգեբանի մոտ հաճախելու հնարավորությունը շարունակական տրամադրվի բոլոր նրանց, ովքեր հոգեբանական խորհրդատվության ունեն կարիք:

Վերջին հանդիպումը տեղի ունեցավ մարտի քսանութին համայնքային ապահով տարածքում, որին մասնակցում էին տասը Տրանս ԼԳԲԻՔ ակտիվիստներ. հանդիպման թեման էր «ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ շքերթ կազմակերպելու հեռանկարները ՀՀ-ում»: Ակտիվիստները բուռն քննարկումների միջոցով փորձում էին գնահատել շքերթ իրականացնելու ռիսկերը՝ հաշվի առնելով ՀՀ-ի ներկա իրավիճակը պատերազմից հետո և ՔՈՎԻԴ-19-ի ժամանակաշրջանում: Ակտիվիստները, ուսումնասիրելով եվրոպական մի շարք երկրներում իրականացված շքերթների պատմությունները, համեմատականներ տարան ԱԼԳ երկրների իրավիճակի և ԼԳԲՏԻՔ ակտիվիստական գործունեության հետ: Ակտիվիստներից մի քանիսը վերհիշեցին Վրաստանում իրականացված շքերթը, որն առաջին անգամ Վրաստանում կազմակերպել էր մեր գործընկեր Թբիլիսի Փրայդ հկ-ն:

Դասընթացների շարքն ավարտելուց հետո մարտի երեսունին բոլոր մասնակիցները հավաքվեցին ամփոփելու երկու ամիսների ընթացքում ձեռք բերած գիտելիքները և քննարկելու ՀՀ-ում առկա խնդիրներն ու խոչընդոտները, որոնց Տրանս ԼԳԲԻՔ անձինք բախվում են իրենց ակտիվիստական գործունեության ընթացքում, ապա համեմատական տանելով Վրաստանի և Ուկրանիայի ակտիվիզմի իրավիճակի հետ, նրանք ներկայացրին իրենց առաջարկությունները և դիտողությունները:

Հավելենք, որ սույն դասընթացների շարքն իրականացվում է ԱՄՆ-ի Գերմանական Մարշալի հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «ԱԼԳ երկրներում ԼԳԲՏԻՔ անձանց շրջանում ակտիվիզմի կառուցում» ծրագրի շրջանակներում՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի, Վրաստանում գործող «Թբիլիսի փրայդ» ՀԿ-ի և Ուկրաինայում գործող «Լեսբուհիների, գեյերի, բիսեքսուալների և տրանսգենդերների առողջություն և պաշտպանություն» ՀԿ-ի հետ համատեղ: Ծրագրի նպատակն է բարձրացնել ԼԳԲՏԻՔ անձանց կարողությունների մակարդակը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ջատագովության և առաջնորդության հմտությունների վերաբերյալ՝ ատելության խոսքի, ատելության հիմքով բռնությունների և խտրականության դեպքերի նվազեցման համար, քարոզչական մեխանիզմներով ապահովել համայնքի անվտանգությունն և բարեկեցությունը և խթանել ԼԳԲՏԻՔ շարժման ամրապնդումը՝ տարածաշրջանում ժողովրդավարական արժեքների հաստատման համար:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄԸ ՃԱՆԱՉՎԵՑ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Տրանսգենդերներ Ն.Ա.-ն և Մ.Ս.-ն, ինչպես նաև Մ.Ե-ն 2018 թվականի հունիս-օգոստոս ամիսներին հաճախել են Երևան քաղաքի Կորյունի 21 հասցեում գտնվող և ԱՁ Լիանա Սաֆարյանի կողմից շահագործվող <<Մալի>> սպորտային ակումբ:

2018 թվականի օգոստոս ամսին Լիանա Սաֆարյանը հայտնել է, որ նրանք այլևս չեն կարող այցելել իր սպորտային ակումբ մարզվելու, քանի որ նրանք տրանսգենդեր անձինք են, և արգելվում է վերջիններիս մուտքն այդ ակումբ:

2018 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին <<Իրավունքի կողմ>> իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից Լիանա Սաֆարյանին ուղարկվել են նամակներ, որոնցով խնդրվել է հայտնել սպորտային ակումբ մարզվել արգելելու հիմքերի մասին, սակայն վերջինս տարբեր պատճառաբանություններով հրաժարվել է հայտնել արգելքի իրավական հիմքերը:

Դրանից հետո «Իրավունքի կողմ» ԻՀԿ փաստաբանը դիմել է դատարան՝ խնդրելով ճանաչել տրանսգենդեր անձանց իրավունքների խախտումը խտրականության հիմքով:

Շուրջ երկուսուկես տարի տևած դատական գործընթացից հետո, 18.03.2021թ.-ին դատարանը կայացրեց արդարացի դատական ակտ՝ ճանաչելով Ն.Ա.-ի, Մ.Ս.-ի և Մ.Ե.-ի իրավունքների խախտումը խտրականության հիմքով:

Վճռում դատարանը մասնավորապես նշել է, որ. «Գործի առանձնահատուկ փաստերով հիմնավորվել է, որ Հայցվորներն արժանացել են խտրական վերաբերմունքի, քանի որ մյուս հաճախորդների հետ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում վերջիններիս նկատմամբ դրսևորվել է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվել են ակումբ այցելելու և Պատասխանողի հետ կնքված ծառայությունների մատուցման գործարքից ծագող իրավունքներից: Հետևաբար, Դատարանը եկել է այն հետևության, որ գործով ապացուցվել են նաև բացառապես սեռական կողմնորոշման և (կամ) գենդերային ինքնությամբ պայմանավորված Պատասխանողի կողմից Հայցվորների իրավունքների խախտման, բացառապես խտրականության հիմքով <<Մալի>> սպորտային ակումբի ծառայություններից օգտվելը Հայցվորներին արգելելու փաստերը»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA
CONSULAR DEPARTMENT

№ 1108-1/1131-21
26.04.2021

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄԱՍՏԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԿԻՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
(էլ.փոստի հասցեն՝ rightsdengo@gmail.com)

Հարգելի՛ տիկին Մարգարյան,

Ի լրումն Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հրապարակման փաստաթղթի՝ 24.03.2021թ. № 1108-1/1136-21 գրության, հայտնում ենք, որ Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունից տեղեկություններ հավաքելուց հետո՝ [redacted], [redacted] և [redacted] մուտքը Եգիպտոս արգելելու պատճառը եղել է հիշյալ անձանց անձնագրերում նշված սեռի և իրենց արտաքինի անհամապատասխանությունը:

Հարգանքով՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԳԼՈՒԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՄ

ՀԱՍՄԻԿ ՀԱՍՄԻԿՅԱՆ

Ինչպես ավելի վաղ ներկայացրել էինք, ս.թ. փետրվար ամսին երեք տրանսգենդեր կանայք հանգստի նպատակով ձեռք էին բերել տուրիստական տասնչորսօրյա փաթեթներ դեպի Եգիպտոս՝ Շարմ էլ Շեյխ: Փետրվարի 19-ին ժամանելով Շարմ էլ Շեյխի օդանավակայան՝ անցակետում վեց ժամ սպասելուց հետո տեղեկացվել են, որ երեքն էլ չեն կարող երկիր մտնել, քանի որ անձնագրում նշված է, որ տղամարդ են, կարող են մուտք գործել երկիր միայն անձնագրում սեռի մասին նշումն իգական դարձնելուց հետո:

«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն դիմել էր ՀՀ Արտաքին գործերի նախարարություն և Եգիպտոսում ՀՀ դեսպանատուն դեպքի առթիվ պարզաբանումներ ստանալու համար:

Ս.թ. ապրիլ ամսին «Իրավունքի կողմ» ՀԿ-ն ստանում է պաշտոնական պատասխան ՀՀ արտաքին գործերի նախարարությունից հետևյալի վերաբերյալ, որ Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունից ստացված տեղեկատվության համաձայն Դ. Ղ.-ի, Հ. Դ.-ի և Է. Ա.-ի մուտքը Եգիտոս արգելելու պատճառը եղել է հիշյալ անձանց անձնագրում նշված սեռի և իրենց արտաքինի անհամապատասխանությունը:

Նման դեպքերը, երբ խախտվում են տրանսգենդեր անձանց իրավունքները թե՛ ՀՀ-ում, թե՛ ՀՀ սահմաններից դուրս բազմաթիվ են, և դրանք տարիներ շարունակ լուծում չեն ստանում:

«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն բազմիցս է այս խնդրի մասին բարձրաձայնել ՀՀ առողջապահության նախարարությունում, արդարադատության նախարարությունում և այլ գերատեսչություններում՝ լուծումներ ստանալու նպատակով, սակայն մինչև օրս ոչ մի դրական պատասխան չի ստացել կամ նամակները մնացել են անպատասխան:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն կոչ է անում անհապաղ կատարել օրենսդրական բարեփոխումներ՝ վերացնելու առկա խնդիրը, որին տարիներ շարունակ բախվում են տրանսգենդեր անձինք՝ ստանալով բազում հոգեբանական տրավմաներ, որոնք էլ ազդում են նրանց կյանքի որակի վրա:

ՀՀ ակտերի գրանցման Քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու մասին ՔԿԱԳ մարմնի եզրակացությունը կազմվում է մասնավորապես հետևյալ դեպքերում, երբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական կազմակերպությունը տվել է սեռի փոփոխության մասին սահմանված ձևի փաստաթուղթ: Այսինքն, եթե անձը ցանկանում է փոփոխություն կատարել քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ (սեռի մասին գրառման փոփոխություն), նա պետք է՝

- Իրականացնի սեռափոխություն:
- Ներկայացնի ՀՀ օրենսդրության սահմանված կարգով բժշկական կազմակերպության կողմից տրված սեռի փոփոխության մասին փաստաթուղթ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Գարսոնը և Նիկոտը ընդդեմ Ֆրանսիայի (ECHR 21 (2017) 06.04.2017) գործով կայացրած վճռով անդրադարձ է կատարել նշված հիմնախնդիրներին, մասնավորապես, նշելով, որ . տրանսգենդերների սեռական ինքնության ճանաչումը բժշկական միջամտությունների ենթարկվելուց հետո, որը նրանք չեն ցանկացել իրականացնել, նշանակում է անձնական կյանքի հարգելու իրավունքի լիակատար ապահովման մերժում: Դատարանը համարեց, որ անձի տեսքի փոփոխությունը, սեռափոխության վիրահատության, ստերջացման կամ այլ բժշկական միջամտությունների միջոցով, հանգեցնում է անդառնալի հետևանքների և խախտում է անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը: Դատարանը համարեց, որ պատասխանող պետությունը ձախողվել է իր պոզիտիվ պարտավորության իրականացման հարցում՝ ապահովելու անձնական կյանքը հարգելու իրավունքը: Դատարանը գտնում է, որ այս առնչությամբ 8-րդ հոդվածի խախտում է եղել: Բացի այդ, պարտադիր ստերջացումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննադատել է Y.Y.- ն ընդդեմ Թուրքիայի և Soares de Melo-ն ընդդեմ Պորտուգալիայի գործերում:

Այսինքն՝ պետք է արձանագրել, որ պետությունը չի կարող անձին հարկադրել կատարել սեռափոխության վիրահատություն, քանի որ այն ամբողջովին խաթարում է պետության պարտավորությունը հարգելու յուրաքանչյուրի անձնական կյանքի և ազատության անձեռնմխելիությունը: Գենդերային ինքնությունը կամ սեռական կողմորոշվածությունը մարդու մասնավոր կյանքի մասն է կազմում և անձը չպետք է իր ֆիզիկական և հոգևոր անձեռնմխելիության և սեռական կողմորոշվածության կամ գենդերային ինքնության միջև կատարի ընտրություն: Բացի այդ, գենդերային ինքնության ապացույց պահանջելը նվաստացուցիչ է, ոտնահարում է անձի արժանապատվությունը:

ՀՀ սահմանադրության 26-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Այսպիսով, վերոգրյալ փաստական և իրավական հանգամանքների ուսումնասիրությունը հանգում է նրան, որ Հայաստանի Հանրապետությունում առկա կարգավորումները հարկադրում են անձին ենթարկվելու սեռափոխության վիրահատության (ստերջացման)՝ քաղաքացիական կացության գրանցման ակտերում փոփոխություններ կամ ուղղումներ կատարելու համար, ինչն ինչպես արդեն փաստվեց և հիմնավորվեց, հանդիսանում է մարդու անձնական կյանքի կոպիտ միջամտություն, եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաև ազգային օրենսդրության խախտում: Ուստի, պետք է արձանագրել, որ պետությունը ստիպում է անձին դիմելու անդառնալի վիրաբուժական միջամտության՝ քաղաքացիական կացության գրանցման ակտում ուղղում կատարելու համար, ինչն անթույլատրելի է և հակասում է ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ Հայաստանում նաև բացակայում են իրավական կարգավորումները, ըստ որոնց կսահմանվեր սեռափոխության մասին բժշկական կազմակերպության կողմից տեղեկանք տրամադրելու նորմերը և կարգավորումները, առողջապահության նախարարությունը մինչ այժմ չի հստակեցնում՝ որն է համարվում սեռափոխություն:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում հավաքագրվել են մի շարք ԱՊՀ երկրներ, որտեղ միայն հոգեբանի կամ հոգեբույժների խմբի եզրակացության փաստաթուղթը բավարար է, որ անձը փոխի իր անձնագրային սեռը՝ առանց պարտադիր բժշկական միջամտության:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն քայլեր է ձեռնարկում խնդրի արմատական լուծման ուղղությամբ: Հետագա ընթացքի վերաբերյալ կարող եք տեղեկատվություն ստանալ մեր պաշտոնական կայքեջից:

«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն հորդորում է տրանս անձանց չեղարկել պլանավորած այցերը Եգիպտոսի Արաբական Հանրապետություն՝ հետագա խնդիրներից խուսափելու համար:

ԻԿ ԻՀԿ-ն շնորհավորում է Մոնիկա Սարկիսյանին Միսս Տրանս Գլոբալ 2021թ.-ի եզրափակիչ փուլ անցնելու կապակցությամբ: Նա մրցույթի ժամանակ կներկայացնի Հայաստանի Հանրապետությունը:

Մոնիկան մոդել և դիմահարդար է: Նա մրցանակի շնորհիվ հույս ունի ամբողջ աշխարհի ուշադրությունը հրավիրել ԼԳԲՏԻՔ անձանց խնդիրների վրա, հատկապես Հայաստանում ԼԳԲՏԻՔ անձանց նկատմամբ խտրականության վրա:

#MissTransGlobalArmenia

#MissTransGlobal

#MissTransGlobal2021

#TransIsBeautiful

#transgender

#TranswomenAreWomen

#TransPageant

#InternationalTransPageant

#Transbeautyqueen

#girlslikeus #MissTrans

#transgender

#BeautyPageant

ՄԱՅԻՍԻ 17-Ն ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՆՇՎՈՒՄ Է ՈՐՊԵՍ ՀՈՄՈՖՈԲԻԱՅԻ, ՏՐԱՆՍՖՈԲԻԱՅԻ ԵՎ ԲԻՖՈԲԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ (IDAHOBIT):

ՀԵՏԵՎԵԼ

Սույն տեսանյութը պատմում է ԼԳԲՏԻՔ անձանց տարիների պայքարի արդյունքում ձեռք բերած դրական փոփոխությունների մասին:
Հոլովակի նպատակն է նվազեցնել հասարակության կողմից ատելությունը ԼԳԲՏԻՔ անձանց նկատմամբ՝ ցույց տալով, որ ԼԳԲՏԻՔ անձինք հասարակության լիիրավ անդամ են, նրանք նույնպես իրավունք ունեն ապրել առանց խտրականության, ազատ և երջանիկ՝ զերծ ատելության ցանկացած դրսևորումից:
Չէ՞ որ « մեր իրավունքները ՆՈՒՅՆՆ են»:

#IDAHOBIT2021 #ՏՐԱՆՍՀԱՅԱՍՏԱՆ #ԼԳԲՏԻՔԻՐԱՎՈՒՆՔ

Սերը սեր է

Մենք սիրում ենք սա

Հզոր!!!!!

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ. ԿԱՊ ՎԱՂՎԱ ՀԵՏ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՆԱԽԱՁԵՌՆԵԼ ԵՆ ՄԻ ՇԱՐՔ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ



Երևանից և ՀՀ տարբեր մարզերից քսան երիտասարդ տրանսգենդեր ակտիվիստները, որոնք մասնակցել էին «Մարդու իրավունքներ. կապ վաղվա հետ» դասընթացին, իրականացրեցին օնլայն հանդիպումների շարք, որտեղ քննարկեցին ակտիվիզմի հեռանկարները ՀՀ-ում, մարդու իրավունքները և հիմանարար ազատությունները, ակտիվիստների նկատմամբ ատելության և բռնության կոչերը, սոցիալական մեդիայում խարանը և խտրականությունը, ջատագովությունը, առաջնորդությունը, տրանսգենդեր անձանց մտավոր և ֆիզիկական անվտանգությունը և առողջությանը, սոցիալական մեդիայում արշավներ իրականացնելու հմտությունները և այլն:

Առաջին օնլայն հանդիպումը տեղի ունեցավ ապրիլի հինգին, որը նախաձեռնել և իրականցնում էր տրանսգենդեր ակտիվիստ Կուկա Կայանը, ով տարիներ շարունակ պայքարում է ատելության կոչերի և բռնությունների դեմ, ինչպես նաև բարձրացնում է տրանսգենդեր անձանց տեսանելիությունը սոցիալական մեդիայում: Կ. Կայանը շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին իր կողմից կազմակերպած օնլայն հանդիպմանը ներկա գտնվելու և ՀՀ-ում տրանսգենդեր անձանց նկատմամբ խտրականության, ատելության ու բռնության կոչերը միասին նվազեցնելու համար: Հանդիպման ընթացքում Կ. Կայանը նաև ներկայացրեց տրանս անձանց նկատմաբ սոցիալական մեդիայում օրեցօր աճող սպառնալիքները, որոնց արդյունքում խաթարվում է տրանսգենդեր անձանց մտավոր և հոգեկան առողջությունը: Մասնակիցները քննարկեցին, թե ապագայում ինչպես կարող են հավաքագրել բոլոր ատելության կոչերը և դիմել համապատասխան մարմիններին՝ այդ խնդրին լուծումներ տալու նպատակով:

Երկրորդ հանդիպումը կազմակերպել էին տրանսգենդեր ակտիվիստներ Վիվիենը և Նիկիտան. հանդիպման թեման տրանսգենդեր անձանց անվտանգությունն ու ինքնապաշտպանությունն էր: Մասնակիցները քննարկեցին, թե ինչպես են տրանսգենդեր անձինք հասարակության կողմից պարբերաբար ենթարկվում խտրականության, նվաստացումների և ծաղրանքների: Մասնակիցների խոսքերով գիշերային ժամերին լինում են դեպքեր, երբ հարձակվում են տրանսգենդեր անձանց վրա՝ պատճառելով մարմնական և հոգեկան վնասվածքներ, և այդ խնդիրը տարիներ շարունակ լուծում չի ստանում: Տրանսգենդեր ակտիվիստները քննարկեցին՝ ինչպես ինքնապաշտպանվել և բարձրացնել անվտանգության վերաբերյալ գիտելիքների մակարդակը տրանսգենդեր անձանց շրջանում: Նրանք նաև կարևորեցին նմանատիպ հանդիպումները, քանի որ քննարկումներն էլ ավելի են բարձրացնում տեղեկատվության մակարդակը, ուժեղացնում տրանսգենդեր անձանց անվտանգությանն ուղված քայլերը:

Հաջորդ օնլայն հանդիպումն իրականացավ ապրիլի տասներկուսին. հանդիպումն անցկացրեցին տրանսգենդեր ակտիվիստներ Մ. Սարկիսյանը և Լ. Մարտիրոսյանը: Հանդիպմանը Մ.-ն և Լ.-ն խոսեցին ՀՀ-ում տրանս ակտիվիզմի իրավիճակի մասին՝ ավելի շատ տրանսգենդեր անձանց ներգրավվելով ակտիվիզմի մեջ: Մասնակիցները բարձրաձայնեցին անվտանգության հետ կապված մի շարք խնդիրների մասին, որոնք տրանս անձանց խանգարում են հաճախակի բաց դեմքով հանդես գալ հանրությանը՝ խոսելու իրենց խնդիրների մասին: Հանդիպման ավարտին ակտիվիստները կարևորեցին, որ անհրաժեշտ է լինել անվախ և պայքարել հանուն հավասարության, անվտանգության և բարօրության՝ վերջ դնելու խարանը և խտրականությունը տրանսգենդեր անձանց նկատմամբ:

Շարունակելով օնլայն միջոցառումների շարքը՝ հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ ապրիլի տասնյոթին՝ կրկին տրանս ակտիվիստների մասնակցությամբ: Հանդիպումը վարում էին Մ. Աթաբեկյանը և Է. Կարապետյանը, ովքեր խոսեցին տրանսգենդեր անձանց մտավոր և ֆիզիկական առողջությունից և անվտանգությունից: Լինելով բժշկական համալսարանում սովորող տրանսգենդեր ակտիվիստ՝ Մ.-ն ցանկություն հայտնեց օգնելու այն անձանց, որոնք առաջին բուժօգնության կարիք ունեն: Մասնակիցները շնորհակալություն հայտնեցին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ին տրանս ԼԳԲԻՔ անձանց հոգեբանական աջակցություն ցուցաբերելու համար՝ նշելով, որ այն շատ կարևոր է հետագայում մի շարք մտավոր խնդիրներից խուսափելու համար:

Հաջորդ օնլայն հանդիպումը նվիրված էր իրավունքների վերաբերյալ տրանսգենդեր անձանց տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը: Դասընթացն անցկացկացնում էր տրանսգենդեր ակտիվիստ Գ.-ն և կազմակերպության փաստաբան Արթուր Մարգարյանը: Ա. Մարգարյանը և Գ.ն ներկայացրեցին՝ ինչպես պաշտպանել իրավունքները ոստիկանությունում, դատարաններում և մի շարք այլ հաստատություններում: Մասնակիցները հարց ու պատասխանի միջոցով ստացան սպառիչ պատասխաններ, ինչպես նաև ամրապնդեցին իրենց գիտելիքները, որոնք հետագայում կնպաստեն իրենց ակտիվիստական գործունեությանը:

Իսկ արդեն ապրիլի քսանմեկին կազմակերպված հանդիպում-քննարկումը նվիրված էր առաջնորդություն թեմային: Հանդիպումը անցկացրեցին տրանսգենդեր ակտիվիստներ Ա.-ն և Գ.-ն, ովքեր թեմայի վերաբերյալ ստացել էին խորը գիտելիքներ: Մասնակիցները քննարկեցին եվրոպական առաջնորդության լավագույն մոդելները, կառավարման հմտությունները և մեթոդները: Հանդիպման ավարտին մասնակիցները ոգևորությամբ նշեցին, որ շատ կցանկանային այդ մոդելները կիրառել նաև Հայաստանում:

Հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ մայիսի երեքին, որը վարում էր ակտիվիստ Հ. Գալստյանը: Հանդիպման թեման էր ջատագովությունը և արշավների կազմակերպման հմտությունները: Մասնակիցները քննարկեցին, թե ինչպես պետք է ջատագովության գործընթացներում ներգրավել համայնքային նախաձեռնություններին, մասնագետներին և տարբեր այլ խմբերին, որպեսզի ակտիվիզմը ՀՀ-ում ավելի ամրապնդվի և զարգանա: Արշավների կազմակերպման մեթոդների վերաբերյալ ծավալվեց համապարփակ քննարկում և կազմվեց ԼԳԲՏԻՔ տոների և հիշատակների քարտեզ՝ ապագայում հանրային արշավներ կազմակերպելու համար:

Շարունակելով հանդիպումների շարքը՝ Ռ. Եղիազարյանը մասնակիցներին սովորեցրեց սոցիալական մեդիայում իրականացնել օնլայն արշավներ՝ բարձրացնելով տրանսգենդեր անձանց տեսանելիությունը: Մասնակիցները ձեռք բերեցին տեսական գիտելիքներ՝ ինչպես ստեղծել սոցիալական էջեր, հաջողությամբ վարել դրանք, միևնույն ժամանակ համախմբել տրանս անձանց ակտիվիզմի մեջ, օգտագործել հարթակները՝ տրանսգենդեր անձանց տալու տեղեկատվություն ապագա քայլերի և պլանների վերաբերյալ: Հանդիպումն անցավ շատ կառուցողական և հետաքրքիր, քանի որ թեմաները նոր էին:

Նախավերջին օնլայն հանդիպման ընթացքում տրանսգենդեր ակտիվիստները քննարկեցին, թե ինչպես օտար լեզուներ սովորելու միջոցով կկարողանան դիմել միջազգային փոխանակման ծրագրերի, կամավորական աշխատանքների, որոնք ուղղված են ուժեղացնելու տրանսգենդեր և ԼԳԲԻՔ անձանց՝ նրանց տալով նոր գիտելիքներ և ստացած գիտելիքները կիսելու հմտություններ: Մասնակիցների խոսքերով Հայաստանում ատելության մակարդակն այնքա՛ն բարձր է, որ նրանք չեն կարողանում բավարար գիտելիքներ ստանալ դպրոցներում, իսկ համալսարաններ չեն կարողանում ընդունվել, քանի որ խտրականացվում են ուսանողների կամ դասախոսների կողմից:

Նրանք ցանկություն հայտնեցին, որ ՀԿ-ն տրանսգենդեր անձանց համար կազմակերպի օտար լեզուների դասընթացներ, որը կօգնի նրանց լինել ավելի կրթված, տեղեկացված և ուժեղ:

Վերջին հանդիպումը տեղի ունեցավ մայիսի քսանչորսին, որին մասնակցում էին այն տրանսգենդեր ակտիվիստները, որոնք մասնակցել էին դասընթացին և անցկացրել էին բոլոր թվարկված վեբինարների շարքը, ինչպես նաև այս ամբողջ ընթացքում մասնակցել էին կազմակերպության կողմից հանրային միջոցառումներին, նկարահանվել էին սոցիալական գովազդներում, պատրաստել էին տեղեկատվական թերթիկներ, ունեցել էին տարբեր հանդիպումներ տրանսգենդեր անձանց հետ՝ բարձրացնելով նրանց տեղեկատվության մակարդակը տվյալ ծրագրի մասին և ներգրավելով նոր տրանսգենդեր ակտիվիստների, որոնք հետագայում կաջակցեն նման արշավներ իրականացնելու գործընթացներին՝ բարձրացնելով տրանսգենդեր անձանց տեսանելիությունը և ուժեղացնելով Տրանս շարժումը ՀՀ-ում: Մասնակիցները ամփոփեցին բոլոր վեբինարները, պլանավորեցին հետագա քայլերը, որոնք ուղղված կլինեն ակտիվիզմի զարգացմանը և ամրապնդմանը՝ կառուցելով ժողովրդավար և անվտանգ Հայաստան:

Ակտիվիստները շնորհակալություն հայտնեցին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ին, ինչպես նաև Եվրամիությանը և Եվրախորհրդին այս կարևոր ծրագրում տրանսգենդեր ակտիվիստներին ներգրավվելու և ընձեռնված հնարավորության համար, որը օգնեց իրենց լինել տեղեկացված մարդու իրավունքների, ջատագովության, առաջնորդության, անվտանգության, ատելության խոսքի և մի շարք այլ թեմաների վերաբերյալ:

Հանդիպումների շարքն իրականացվել է «Արդարադատության մատչելիության խթանում Արևելյան գործընկերության երկրներում խտրականության, ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելության խոսքի զոհերի համար» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրամիության և Եվրախորհրդի կողմից և իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից:

Հանդիպման ընթացքում հնչեցրած տեսակետները չեն արտահայտում որևէ կողմի պաշտոնական կարծիքը:

ԻՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Սույն տեսանյութը պատմում է երեք հայ տրանսգենդեր կանանց մասին, ովքեր մեկնել էին Եգիպտոսի Արաբական Հանրապետություն հանգստի նպատակով, սակայն Շարմ էլ Շեյխ օդանավակայանի անցակետում բախվել են խտրականության իրենց անձնագրում սեռի մասին նշման պատճառով: Հոլովակի նպատակն է բարձրաձայնել ՀՀ-ում բնակվող տրանսգենդեր անձանց խնդիրների մասին:
Սույն տեսանյութը նկարահանված է իրական փաստերի հիման վրա:

#IDAHOBIT2021 #RightSideNGO #Transgenderarmenia

©

RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFENDER NGO

www.RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

facebook.com/RightSideNGO

twitter.com/RightSideNGO

instagram.com/RightSideNGO

+374 - 11 - 880 - 770

©Copyright All Rights Reserved for Right Side NGO.